ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՎԱԶԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄԻՑ

« 03 » _____հուլիսի_____ 2017թ. N _19_

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Շովազարդ համայնքի ավագանու 2017 թ.-ի թիվ 4 նիստի օրակարգը՝
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ /4/ դեմ /-/ ձեռնպա/-/

Ջանիկ Ղարիբյան
Նորիկ Կարոյան
Կարեն Մխիթարյան
Սասուն Գալոյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մարգարյան

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՈՎԱԶԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄԻՑ

« 03 » ____հուլիսի_____ 2017թ. N 20_

ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 18-րդ հոդվածի 5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է՝**

Ծովազարդ համայնքի 2017 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել փոփոխություն:

1. Ծովազարդ համայնքի 2017 թվականի բյուջեի ըստ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 1-ին դասի 5112 հոդվածում / շենքերի և շինությունների կառուցում/ նախատեսված 4202300 / չորս միլիոն երկու հարյուր երկու հազար երեք հարյուր/ ՀՀ դրամից պակասեցնել 200000/ երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ և տեղափոխել ըստ գործառնական դասակարգման 08 բաժնի 02 խմբի 3-րդ դասի 5134 հոդված /նախագծահետազոտական ծախսեր/ Ծովազարդի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքներ կատարելու նախագիծ նախահաշիվ կազմելու համար:
2. Ծովազարդ համայնքի 2017 թվականի բյուջեի ըստ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 1-ին դասի /շենքերի և շինությունների կառուցում/ 5112 հոդվածից պակասեցնել 4002300 / չորս միլիոն երկու հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ և տեղափոխել ըստ գործառնական դասակարգման 08 բաժնի 02 խմբի 3-րդ դասի 5113 հոդվածին /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում / Ծովազարդի մշակույթի տան կապիտալ վերանորոգման աշխատանքներ կատարելու համար:

3. Ծովազարդ համայնքի 2017թ. բյուջեի ըստ գործառնական դասակարգման 11 բաժնի 01խմբի 2-րդ դասի 4891 հոդվածի /պահուստային ֆոնդ/ 1800000/մեկ միլիոն ութ հարյուր հազար/ՀՀ դրամից պակասեցնել 100000/մեկ հարյուր հազար/ՀՀ դրամ և տեղափոխել բյուջեի ըստ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 1-ին դասի 4261 հոդված/ծաղիկներ և բույսեր/:
4. Հանձնարարել հաշվապահ Ա. Նաջարյանին կատարել համայնքի 2017թ. բյուջեի փոփոխությունը և ներկայացնել նոր նախահաշիվ նոր ժամանակացույց և նոր քաղվածք պայմանագիր:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ /4/ դեմ /-/ ձեռնպահ /-/

Կարեն Մխիթարյան
Ջանիկ Ղարիբյան
Նորիկ Կարոյան
Սասուն Գալոյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Մարգարյան